

Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

.....

«Պատմութիւն Հայաստանայ գնալոյ եւ գալոյ եսկանապարհից ի թուիս Քսի. 1678». այս է խորագիրը այն ուղեգրութեան, որուն ձեռագիրը պահուած կը մնար Անտոնեան Միաբանութեան Կ. Պոլսոյ վանքը, ՄԺԱ. (=211) թուահամարով: Այս ձեռագիրին ես ծանօթացած էի պատահաբար:

1932ին, երբ առիթը ունեցայ այցելելու Զմմառի վանքը՝ Լիբանանի բարձունքներուն վրայ, խնդրեցի մեծաւոր Հ. Կարապետ վրդ. Պատուհասեանէ, որ հասի ձեռագիրին մէկ պատճէնը տրամադրել ինծի: Հանգուցեալ Պատուհասեան վրդ. ազնուօրէն կատարեց իմ խնդրանքս:

Ես շահագրգռուած էի այս ձեռագիրով, վասնզի ուշադրութիւնս գրաւած էր զայն գրողին անձը, իր Ժամանակին խիստ հետաքրքրական դէմքերէն մին, որ իբր Առաջնորդ Վասպուրականի, իբր Պատրիարք Պոլսոյ եւ իբր Կաթողիկոս Աղթամարի ո՛չ միայն հայ հանրային կեանքին մէջ դեր կատարած էր, այլեւ կարծես թէ քաղաքական-զինուորական գործունէութիւն մըն ալ ունեցած էր, ինչպէս պիտի տեսնուի:

1936ին ձեռագիրը ստացաւ այժմէականութիւն մը, երբ Իտալիա ջնջեց Հայէջիստանի անկախութիւնը այնքան դաւաճանօրէն, արհամարհելով եւրոպական պետութիւններու պղստոնական բողոքները:

Բրիտանական Խորհրդարանին մէջ աշխատա-